ՎԵՐԱԿԱՆԳՆԵՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԻԹՄԸ

Մեր թղթակցի հարցազրույցը կուսակցության քաղաքային կոմիտեի երկրորդ քարտուղար Հ. Ա. ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ հետ:

ԹՂԹ.— Մեր քաղաքի արտաքուստ հանգստությունը իր մեջ ներքին լարվածություն ունի: Շարունակվում են գործադուլները մարզկենտրոնի մի շարք ձեռնարկություններում: Մարդկանց ջղերը, համարձակվում եմ հավատալ, լարված են մինչև վերջին սահմանը: Այդ շատ բաներով բացատրվում է գործերի վիճակի մասին օպերատիվ տեղեկության քաղցով, ինչքն էլ իր հերթին ծնում է տարբեր տեսակի լուրեր: Արդյոք չէի՞ք կարող դուք, Հրանտ Արտեմովիչ, համառոտակի բնութագրել Ստեփանակերտում այսօր տիրող իրադրությունը:

Հ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ.— Ցավոք, պիտի խոստովանել, որ քաղաքի արդյունաբերությունը փաստորեն կանգնած է: Աշխատում են միայն մարզկենտրոնի կենսագործունեությունն ապահովող ձեռնարկությունները, շինարարները ու տրանսպորտայինները: Տնական գործադուլները, ուղղակի ասենք, հանգեցրել են տխուր արդյունքների: Տարեսկզբից ի վեր մենք պակաս ենք արտադրել ավելի քան 50 միլիոն ռուբլու արտադրանք: Խախտվել են պայմանագրային պարտավորությունները: Մեր ձեռնարկությունները, առանձնապես նրանք, որոնք փոխադրվել են լրիվ տրնտ հաշվարկի և ինքնաֆինանսավորման, հասել են սնանկության եզրին: Գործերի վիճակը ավելի բարվոք չէ առևտրում, բնակչության կենցաղային սպասարկման ոլորտում: Այսպես, Ստեփանակերտի կողմից անցած 11 ամսվա շրջանառության պլանը կատարվել է ընդամենը 77,9 տոկոսով: Այդ նույն ժամանակամիջոցում կենցաղայինները բնակչությանը 860 հազար ռուբլով պակաս ծառայություններ են մատուցել, այսինքն այդ ցուցանիշի գծով առաջադրանքը կատարվել է 41 տոկոսով: Այս ամենը չէր կարող բացասաբար չանդրադառնալ քաղաքի ֆինանսական վիճակի վրա: Եթե նորմալ պայմաններում, թույլ տանք մեզ այսպես արտահայտվել, Ստեփանակերտի ամենօրյա դրամական շրջանառությունը կազմում էր 130-140 հազար ռուբլի, այսօր այն հազիվ հասնում է 35-40 հազարի: Դրա հետևանքով բանկում բավականաչափ դրամանիշեր չեն լինում աշխատող քաղաքացիներին աշխատավարձը ժամանակին տալու համար: Այնպես, որ մարդկանց նյութական բարեկեցությունը նույնպես վատացել է:

ԹՂԹ.— Դուք ասացիք, որ շինարարները դադարեցրել են գործադուլները, բայց համաձայնվեք՝ նրանց գործը չի երևում:

Հ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ.— Այո, դա այդպես է: Այսօր լրիվ կարողությամբ գործել նրանց թույլ չեն տալիս օբյեկտիվ դժվարությունները: Պակասում են շինանյութերը: Հանրապետական մատակարարները պարզապես հրաժարվել են մեզ որևէ բան տալ: Մեր № 9 տրեստի ղեկավարությունը վերջերս քաղկոմին հայտնեց, որ Բաքվից շինանյութերի մատակարարում առաջիկայում նույնպես չի սպասվում: Ստիպված ենք լոլա գնալ սեփական ռեսուրսներով: Բայց այստեղ էլ ծագեցին ուրիշ դժվարություններ: Հայտնի է, որ տեղական շինանյութերի հիմնական մատակարարը Ստեփանակերտի համանուն կոմբինատն է: Սակայն նրա աշխատանքը խեղված է: Շինանյութերի կոմբինատի որոշ ղեկավար աշխատողներ գտնվում են հետաքննության տակ: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, կուսակցության քաղկոմը ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի խորհրդին հանձնարարել է դիրեկտորի պարտականությունները ժամանակավորապես կոմբինատի ինժեներատեխնիկական աշխատողներից մեկի վրա:

Խորհուրդը իր հերթին այդ պաշտոնում երաշխավորել է գրավոր ինժեների տեղակալ Վ. Սարգսյանին: Այսօր կոմբինատից մեզ հայտնեցին, որ Մարտակերտի քարահանքում, որտեղ աշխատանքը չի դադարել, կուտակվել է առնվազն 30 հազար հատ խորանարդիկ քար: Անհրաժեշտ է այն շտապ կարգով գործի գցել:

ԹՂԹ.— Առավել ևս, որ հանրապետության զանազան անկյուններից մեր քաղաքը եկող փոխստականները, ինչպես երբեք, զգում են շինարարների օգնության կարիքը...

Հ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ.— Ճիշտ այդպես: Այսօր Ստեփանակերտում գտնվում են շուրջ հինգ հազար փախստականներ: Նրանք հիմնականում տեղավորված են քաղաքի հանրակացարաններում: Բայց մինչև ե՞րբ... Ահա ձմեռն էլ վրա հասավ: Իսկ նրանք այդպես էլ դեռ բնակարան չունեն: Երեք օր առաջ փախստականների նոր խումբ եկավ Կիրովաբադից: Այս անգամ օգնության շտապեցին քաղաքի բնակիչները, մարդկանց ապաստանելով իրենց տներում: Ճնորհակալություն նրանց դրա համար: Բայց չէ որ մեր հայրենակիցներին կա դեռի է առավել արդյունավետ օգնություն ցույց տալ: Այնպես որ հարկ է թեերը քշտած գործի անցնել:

Այս կապակցությամբ կկամենայի մի քանի բարի խոսք ասել մեր տրանսպորտայինների հասցեին: Այսօր Ստեփանակերտի արտադրական ավտոտրանսպորտային միավորման ստորաբաժանումները աշխատում են լրիվությամբ: Գրեթե բոլոր ձեռնարկությունները ստացել են համապատասխան քանակությամբ փոխադրամիջոցներ: Երանի այսչափ պատասխանատու պահին բոլորն այդպես վերաբերվեն գործին:

Չեմ կարող չհիշատակել նաև այն օգնության մասին, որ մեզ ցույց են տալիս քաղաքում գտնվող զինվորները: Նրանք կանոնավոր ուղեկցում են Աղդամից մեր քաղաքը ալյուր բերող փոխադրամիջոցներին: Մենք՝ ստեփանակերտցիներս, մեր անկեղծ երախտագիտությունն ենք հայտնում նրանց:

ԹՂԹ.— Այնուամենայնիվ, քաղաքի աշխատանքային ռիթմը առայժմ վերականգնված չէ: Կուսակցության քաղաքային կոմիտեն ի՞նչ միջոցներ է ձեռնարկում ստեղծված իրավիճակից դուրս գալու համար:

Հ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ.— Ինչպես գիտեք, քաղկոմը վերջերս Ստեփանակերտի կոմունիստներին, բոլոր աշխատավորներին կոչ արեց դուրս գալ աշխատանքի: Մենք համոզված ենք, որ այսօր գործադուլները մեզ ոչնչով չեն օգնի: Դրանք միայն արհեստականորեն սրում են լարվածությունը քաղաքում և խանգարում կայունացնել իրադրությունը: Կայունացումը չափազանց անհրաժեշտ է: Չէ որ Ադրբեջանական ՍՍՀ և Հայկական ՍՍՀ ներկայացուցիչ ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատների հետ բնկեր Մ. Ս. Գորբաչովի վերջերս ՍՄԿԿ Կենտկոմում կայացած հանդիպմանը հստակորեն ասվեց, որ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը պետք է փոխզիջողական լուծում ստանա առնեկարճ ժամկետում: Ուրեմն, եկեք չխանգարենք նրանց, ովքեր այս օրերին զբաղվում են մեր հարցով, աշխատենք հանգիստ մթնոլորտում: Զարժե, որ հուսախաբ անենք նաև ԼՂԻՄ-ում ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ներկայացուցիչ Ա. Ի. Վոլսկուն, որը ՍՍՀՄ Գերագույն սովետի վերջին նստաշրջանի իր ելույթում ի լուր ամբողջ երկրի ասաց, որ Լեռնային Ղարաբաղում ապրում են բարի և աշխատասեր մարդիկ: Ուրեմն եկեք նրա խոսքերի արդարացիությունը ապացուցենք գործով: Առավել ևս, որ մենք իրոք այդպիսին ենք, եթե ոչ ավելին, և դա նպաստում է ԼՂԻՄ-ի պրոբլեմի շուտափույթ լուծմանը:

Այսօր մենք քաղաքական-բացատրական աշխատանք ենք կատարում քաղաքի բոլոր ձեռնարկություններում, կազմակերպություններում և հիմնարկներում: Անխափան գործում է քաղկոմին կից «Վստահություն» հեռախոսը: Հիշեցնեմ, նրա համարն է՝ 3—32—42: Քաղկոմի աշխատողները նաև անհատական զրույցներ են ունենում քաղաքացիների հետ, որոնց ընթացքում նրանք բացատրում են ՍՍՀՄ Գերագույն սովետի արտահերթ նստաշրջանում և ՍՄԿԿ Կենտկոմում կայացած հանդիպմանը շոշափված որոշումների ու համաձայնությունների էությունը:

ԹՂԹ.— Հրանտ Արտեմովիչ, ձեզ չի թվո՞ւմ, արդյոք, որ աշխատատեղերը վերադառնալը մի տեսակ մարդկանց թույլ կտա ազատվել հոգեբանական բեռնվածությունից:

Հ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ.— Անպայման: Չէ որ, երբ մարդ չի աշխատում, նա իր համար մի ուրիշ զբաղմունք է փնտրում: Այստեղից էլ, իմ կարծիքով, ծնունդ են առնում ամեն տեսակի լուրեր և հրահանգներ: Մարդիկ սկսում են հավատալ դրանց և հաճախ էլ չեն կարողանում կողմնորոշվել իրավիճակում: Իսկ եթե նրանք աշխատեին, քաղկոմը կկարողանար աշխատավորական կոլեկտիվներում հանդիպումներ կազմակերպել իրազեկ ընկերների հետ և մարդկանց տալ հավաստի տեղեկություն: Մի խոսքով, այսօր մեր արդարացի պահանջի մեր բոլոր ալյուսները քաղաքի աշխատանքային ռիթմի վերականգնման օգտին են: Մենք երբեք չենք սխալվել մեր նպատակին հասնելու միջոցներում: Եկեք խելամիտ լինենք նաև այս անգամ: Արդարությունը, վաղ թե ուշ, կհաղթի:

Հարցազրույցը վարեց
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ